Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազ՝
պարոն Արթուր Դավթյանին

**<u>Դիմողներ՝</u>**
Ներքոստորագրյալ քաղաքացիներից (փաստաբաններից)

*Ծանուցման հասցե՝* ք.Երևան, Մաշտոցի 33/1 շենք, թիվ 5 գրասենյակ

*էլ. հասցե՝* info@lawgroup.am

22.04.2021թ.

**ԲՈՂՈՔ**
**(քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ)**

I. **<u>Բողոքի հիմքում դրված փաստերը</u>**.

1. Արմեն Սարգսյանը 2003 թվականից մինչև 2012 թվականը՝ առնվազն տաս տարի հանդիսացել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացի և ունեցել է ՄԹ-ում ընտրելու իրավունք: *Նշված փաստը հաստատվում է գործում գտնվող 10.03.2021թ. զեկույցի (Տեղեկատվական հաշվետվության) քաղվածքով:*

2. 23.02.2018թ. Արմեն Սարգսյանը գրավոր համաձայնություն է ստորագրել ուղղված ԱԺ նախագահին՝ ՀՀ նախագահի թեկնածու առաջադրվելու մասին: *Նշված փաստը հաստատվում է գործում գտնվող համաձայնության պատճենով:*

3. Արմեն Սարգսյանը ներկայացրել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետի 22.02.2018թ. տեղեկանքը՝ վերջին վեց տարում միայն ՀՀ քաղաքացի հանդիսանալու և վերջին վեց տարում ՀՀ-ում մշտապես բնակվելու մասին: *Նշված փաստը հաստատվում է գործում գտնվող տեղեկանքի պատճենով:*

4. Արմեն Սարգսյանը ՀՀ ոստիկանությանը չի հայտնել իր Միացյալ Թագավորության քաղաքացիության մասին: *Նշված փաստը հաստատվում է ՀՀ ոստիկանության ԱՎՎ գրությամբ:*

5. 2018թ. մարտի 2-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընտրվել է Հայաստանի Հանրապետության նախագահ:

6. 2018 թվականի մարտի 2-ի դրությամբ Արմեն Սարգսյանը չի բավարարել ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու պահանջը:

7. 30.03.2021թ. Արա Զոհրաբյանը, Սիմոն Բաբայանը և մյուս գործընկերները (**այսուհետ՝ Փաստաբաններ**) ներկայացրել են ՀՀ գլխավոր դատախազին ուղղված հաղորդում ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]–րդ հոդվածով նախատեսված հանցավոր արարքի կատարման փաստի կապակցությամբ:

8. 31.03.2021թ. ՀՀ գլխավոր դատախազության կողմից հաղորդումը և կից փաստաթղթերը ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայությանը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-181-րդ հոդվածներով սահմանված կարգով նյութեր նախապատրաստելու նպատակով:

9. Նյութերը նախապատրաստել է ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Գ.Մարգարյանը (**այսուհետ՝ Վարույթն իրականացնող մարմին կամ ՀՔԾ**):

10. Նյութերի նախապատրաստման ընթացքում ՀՔԾ-ն՝

1) Արմեն Սարգսյանից բացատրություններ չի վերցրել.
2) չի պարզել Արմեն Սարգսյանի քաղաքացիությունը դադարեցվելու տարեթիվը, ամիսը և ամսաթիվը.
3) Օտարալեզու փաստաթուղթ է օգտագործել՝ ինքնուրույն կատարելով ոչ պաշտոնական թարգմանություն:

11. ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Գ.Մարգարյանը 12.04.2021թ. կայացրել է «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» որոշում (**այսուհետ՝ Որոշում**):

12. Որոշումն ստացվել է 16.04.2021թ.:

## II. **Քրեական գործ հարուցելը մերժելու հիմնական փաստարկները**

ՀՔԾ-ն գտել է, որ՝

1) նախապատրաստված նյութերով հավաստի և փոխկապակցված տվյալներ ձեռք չեն բերվել առ այն, որ Արմեն Սարգսյանի կողմից ՀՀ նախագահի պաշտոնին հավակնելու օրվա դրությամբ նա, բացի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից ունեցել է նաև այլ պետության քաղաքացիության մասին ՀՀ կառավարության լիազոր մարմնին հայտնելու պարտականության կատարում, իսկ նման պարտականության չկատարումը՝ հանգեցներ ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի առկայության:
2) …վարույթն իրականացնող մարմինը զրկված է անձի գործողությունների հակաօրինականությունը գնահատելու, ուստիև՝ նրա արարքում տվյալ հանցակազմի առկայությունը հաստատելու օբյեկտիվ հնարավորությունից, այսինքն առկա է օրենսդրական բաց և ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածով նախատեսված նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հետևաբար՝ դրա հիման վրա անձին դատապարտելը կհանգեցնի «չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնի խախտման:

Այս հետևությանը ՀՔԾ-ն եկել է ՀՀ քրեական օրենսգրքի, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի և այլ իրավական ակտերի ոչ ճիշտ մեկնաբանման արդյունքում:

## III. **Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները**

**Գտնում ենք, որ ՀՔԾ Որոշումն անհիմն է և ենթակա է վերացման, հետևյալ պատճառաբանությամբ.**

1. **ՀՔԾ-ն նյութերի պատշաճ նախապատրաստում չի իրականացրել.**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ն և 2-րդ մասերի համաձայն՝

- հանցագործությունների մասին հաղորդումները **պետք է քննարկվեն** և լուծվեն անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և **հիմքերի բավարար լինելն** ստուգելու անհրաժեշտության դեպքում՝ դրանց ստացման պահից 10 օրվա ընթացքում:
- Նշված ժամկետում կարող են պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր, **բացատրություններ**, այլ նյութեր, ինչպես նաև կարող է կատարվել դեպքի վայրի զննություն, հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում կարող են բերման և անձնական խուզարկության ենթարկվել անձինք, հետազոտման համար վերցվել նմուշներ, նշանակվել փորձաքննություն:

1.1. Հանցագործության մասին հաղորդման «**մեխը**» դրվել է այն փաստի պարզման վրա, որ Արմեն Սարգսյանի ՄԹ քաղաքացիությունը դադարեցվել է 2012 թվականին, ընդ որում, որպես այդպիսի ապացույց ներկայացվել է 10.03.2021թ. զեկույցի (Տեղեկատվական հաշվետվության) քաղվածքի հայերեն թարգմանությունը՝ կատարված թարգմանչի կողմից, որն անտեսվել է ՀՔԾ-ի կողմից:

ՀՔԾ-ն ջանք չի գործադրել պարզելու ՄԹ քաղաքացիության դադարեցման կոնկրետ տարեթիվը, ամսաթիվը և օրը:

Որոշման 7-րդ էջում տեղ է գտել հետևյալ ձևակերպումը. «*....Միացյալ Թագավորության քաղաքացիությունը դադարեցնելու համար Արմեն Սարգսյանը դիմել և այն դադարեցվել է 2011թ. դեկտեմբերի 2-ին: Հակառակը հիմնավորող հավաստի փվյալներ նյութերի նախապատրաստման ընթացքում ձեռք չեն բերվել:*»: Նման եզրահանգում կատարելու համար առնվազն գործի նյութերում պետք է լիներ որևէ պատշաճ փաստաթուղթ, որում նշված կլիներ, որ Արմեն Սարգսյանի ՄԹ քաղաքացիությունը դադարել է 2011թ. դեկտեմբերի 2-ին, այնինչ նման փաստաթուղթ գործի նյութերում առկա չէ: Բացի այդ, ինչպես վերը նշվել է՝ 10.03.2021թ. զեկույցի (Տեղեկատվական հաշվետվության) քաղվածքի հայերեն թարգմանությունից հետևում է, որ Արմեն Սարգսյանը ՄԹ-ում ընտրելու իրավունք է ունեցել 2003-2012թթ.՝ 10 տարի: Սա նշանակում է, որ Արմեն Սարգսյանը 2012թ. է դադարեցրել իր քաղաքացիությունը, ոչ թե՝ 2011թ-ին:

1.2. ՀՔԾ-ն բացատրություն չի պահանջել Արմեն Սարգսյանից: ՀՔԾ-ն հարցում է կատարել ՀՀ նախագահի աշխատակազմի ղեկավարին, որն այդ տեղեկությունը կրող պատշաճ սուբյեկտ չէ:

1.3. ՀՔԾ-ն խախտել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի պահանջն առ այն, որ՝ ***Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարության լեզուն հայերենն է***:

ՀՔԾ-ն փոխանակ ներգրավելու թարգմանիչ, ինքնուրույն թարգմանություն է կատարել այլ երկրի ինչ որ օրենքից (Տես՝ գ.թ. 253-255) և Որոշման մեջ հետևություններ է կառուցել այդ դրույթների վրա: Քննիչը չի կարող լինել նաև թարգմանիչ:

Ըստ Որոշման՝ «*Նյութերի նախապատրաստման ընթացքում ուսումնասիրվել են Բրիտանիայի քաղաքացիության մասին օրենքի համապատասխան կարգավորումները, որոնցից բխում է, որ եթե Մեծ Բրիտանիայի որևէ չափահաս և աշխատունակ քաղաքացի սահմանված կարգով հայտարարում է Բրիտանիայի քաղաքացիությունից հրաժարվելու մասին, ապա պետքարտուղարը գրանցում է հայտարարությունը և այդ պահից հայտարարություն կատարած անձը դադարում է լինել Բրիտանիայի քաղաքացի*:»:

Նախ օրենսդրությանը կատարված հղումը Որոշման մեջ պետք է կատարվի պատշաճ՝ հստակ նշելով ոչ միայն իրավական ակտի անվանումը, այլ նաև հոդվածը:

Իհարկե խիստ դժվար կլիներ վարույթ իրականացնող մարմնի համար վկայակոչել Բրիտանիայի քաղաքացիության մասին օրենքի որևէ հոդված այն պարզ պատճառով, որ նման անվանումով օրենք ՄԹ-ում առհասարակ գոյություն չունի: Բացի այդ, չկա նաև որևէ իրավական կարգավորում «այդ պահից հայտարարություն կատարած անձը դադարում է լինել Բրիտանիայի քաղաքացի» դատողության վերաբերյալ:

1.4. ՀՔԾ-ն ընդհանրապես չի անդրադարձել ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշների առկայության հնարավորությանը: Ընդ որում, հաղորդման մեջ նշված փաստերի և փաստարկների շրջանակում, ՀՔԾ-ն կաշկանդված չի եղել Արմեն Սարգսյանի արարքի որակումը տեսնել ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածի շրջանակում:

2. **ՀՔԾ-ն սխալ է մեկնաբանել քաղաքացիության հետ կապված նորմերը և ՀՀ քրեական օրենսգրքի** 314[1]**-րդ հոդվածը**.

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի[1].

«*Այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում օրենքով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին չհայտնելը Հայաստանի Հանրապետության այն քաղաքացու կողմից, որը հավակնում է այնպիսի պաշտոն զբաղեցնելու, որն զբաղեցնելն օրենքով արգելված է այլ պետության քաղաքացի հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ինչպես նաև այն*

[1] Հոդվածը գտնվում է ՀՀ քրեական օրենսգրքի 29-րդ գլխում՝ «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները» վերնագրով

*պաշտոնապար անձի կողմից, որը, օրենքի համաձայն, չէր կարող լինել նաև այլ պետության քաղաքացի՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից հինգ տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:»*:

Ինչպես իրավացիորեն նշել է ՀՔԾ-ն, ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածը պարունակում է բլանկետային դիսպոզիցիա: Բլանկետային նորմն էլ հանդիսանում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը:

2007թ. փետրվարի 26-ին ընդունվել և 2007թ. մարտի 24-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության քաղաքացության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-75-Ն, **այսուհետ՝ Թիվ** 75 **օրենք**), որով օրենքը լրացվել է 13[1] հոդվածով:

Ըստ այդ հոդվածի հինգերորդ մասի՝ *Հայաստանի Հանրապետության քաղաքացին այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում պարտավոր է այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով* ***<u>մեկամսյա ժամկետում</u>*** *հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին*:

Թիվ 75 օրենքի 6-րդ հոդվածի (**անցումային դրույթներ**) համաձայն՝ *1995 թվականի հունվարի մեկից հետո մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու դեպքում լիազոր մարմնին հայտնելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ուժի մեջ մտնելը ընկած ժամանակահատվածում,* ***<u>առանց սահմանված կարգի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս եկած և այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած անձինք պարտավոր են այդ մասին Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով վեցամսյա ժամկետում հայտնել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին</u>***:

ՀՀ կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 20-ի N 1110-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության քաղաքացու կողմից այլ պետության քաղաքացիություն ընդունելու կամ ստանալու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին հայտնելու կարգ»-ի (**այսուհետ՝ Կարգ**[2]) 3-րդ կետի համաձայն՝ *1995 թվականի հունվարի 1-ից հետո մինչև սույն կարգն ուժի մեջ մտնելն ընկած ժամանակահատվածում առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս եկած և այլ պետության քաղաքացիություն ընդունած կամ ստացած անձինք (այսուհետ՝ հայտարարություն տվող) սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո* ***<u>վեցամսյա ժամկետում</u>*** *դրա մասին անձամբ կամ փոստով հայտնում են Հայաստանի Հանրապետությունում՝ անձնագրային և վիզաների վարչություն կամ ստորաբաժանում, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմիններ*:

---

[2] Ուժի մեջ է մտել 20.10.2007թ.

ՀՔԾ-ն այս նորմերը հայտնաբերելով հանդերձ համարել է, որ դրանք Արմեն Սարգսյանի նկատմամբ կիրառելի չեն այն պատճառաբանությամբ, որ «**Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության քաղաքացիություն ստանալուց հետո** (**ըստ նյութերում առկա տվյալների՝** 2002 **թվական**) **Արմեն Սարգսյանը պարտականություն չի ունեցել այդ մասին հայտնելու լիազոր մարմնին**, **քանի որ նա ՀՀ քաղաքացիությունից դուրս չի եկել**[3]»:

ՀՔԾ-ն սխալ է մեկնաբանել վերոհիշյալ նորմերը, այն պարզ պատճառով, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքը մինչև Թիվ 75 օրենքի ընդունումը, չի թույլատրել ՀՀ քաղաքացուն միաժամանակ լինել այլ պետության քաղաքացի[4]: Հետևաբար, Թիվ 75 օրենքի և Կարգի տրամաբանությամբ այլ պետության քաղաքացիություն ստացած անձինք ըստ էության որակվել են «առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս եկած և այլ պետության քաղաքացիություն ընդունած» անձինք, որոնց շարքում է նաև Արմեն Սարգսյանը: Անվիճելի է, որ «**առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս եկած**» հասկացությունը նշանակում է, որ անձը այդ պահին de jure համարվում է ՀՀ քաղաքացի:

Այս նորմերից հետևում է, որ Արմեն Սարգսյանը ՊԱՐՏԱՎՈՐ ԷՐ Կարգի համաձայն վեց ամսյա ժամկետում, այսինքն 20.10.2007 թվականից[5] մինչև 20.05.2008 թվականը հայտնել իր ՄԹ քաղաքացիության մասին:

Այս իրավանորմերը և փաստերը ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածի պայմաններին համադրելու պարագայում կունենանք հետևյալը՝

1) Արմեն Սարգսյանը սահմանված ժամկետում չի հայտնել ՄԹ քաղաքացիության մասին Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնին. ***Պեպք է հայտներ՝*** *20.10.2007* ***թվականից մինչև*** *20.05.2008* ***թվականը***.
2) Արմեն Սարգսյանը հավակնում է այնպիսի պաշտոն զբաղեցնելու, որն զբաղեցնելն օրենքով արգելված է վերջին վեց տարում այլ պետության քաղաքացի հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին: ***Այս հավակնությունը հայտնել է*** *23.02.2018****թ.՝ ԱԺ նախագահին տրված գրավոր համաձայնությամբ***:

ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածը երկու փաստակազմի (պայմանի) առկայությունն է համարում հանցագործություն՝ 1) այլ պետության քաղաքացիություն ընդունելու և իրավասու մարմնին սահմանված ժամկետում չհայտնելու. 2) այնպիսի պաշտոն զբաղեցնելու, որն զբաղեցնելն օրենքով արգելված է այլ պետության քաղաքացի հանդիսացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին: Այս երկու պայմանը մեր համոզմամբ առկա են:

---

[3] Մեջբերում Որոշումից՝ 14-րդ էջ նախավերջին պարբերություն

[4] «ՀՀ քաղաքացիության մասին» օրենքի 2007թ. խմբագրմամբ 1-ին հոդվածի համաձայն՝ ... Հայաստանի Հանրապետության քաղաքացին միաժամանակ չի կարող լինել այլ պետության քաղաքացի:

[5] Կարգի ուժի մեջ մտնելու օրվանից հետո

Արմեն Սարգսյանի դեպքում, մեր կարծիքով օրենքի բաց չկա, քանի որ նրա կողմից ՀՀ նախագահի պաշտոնին հավակնություն ցուցաբերելու պայմաններում, եթե դեռևս 2007-2008թթ. նա տեղեկացրած լիներ իր ՄԹ քաղաքացիության մասին, ՀՀ ոստիկանությունը պահանջելու էր Արմեն Սարգսյանից պատշաճ փաստաթղթեր ՄԹ քաղաքացիությունից դուրս գալու մասին: Եթե պարզվեր, որ Արմեն Սարգսյանը ՄԹ քաղաքացիությունից դուրս է եկել 2012թ. մարտի 2-ից հետո, ապա ՀՀ ոստիկանությունը որևէ պարագայում չէր տրամադրելու վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսանալու մասին տեղեկանք:

Հատկանշական է, որ ՀՀ ոստիկանության պետի 05.04.2021թ. գրությունից նույնպես հետևում է, որ ոստիկանությունը չի ունեցել Արմեն Սարգսյանի ՄԹ քաղաքացիության մասին որևէ տվյալ (Տես՝ գ.թ. 245):

ՀՔԾ-ի մեկնաբանությամբ ղեկավարվելու դեպքում, ստացվում է, որ ՀՀ քրեական օրենսգիրքը հանրությանը պաշտպանում է ոչ ցանկալի պաշտոնատար անձանցից միայն այն դեպքում, երբ այդ պաշտոնատար անձը իր մտադրությունը հայտնելու պահին դեռևս հանդիսանում է այլ պետության քաղաքացի: ՀՔԾ-նույնիսկ ավելի «խորն է գնացել» և նշում է, քանի որ օրենքով չկա քաղաքացիության մասին հայտնելու ժամկետ, ապա նույնիսկ նշված դեպքում, հանրությունը պաշտպանված չէ անցանկալի պաշտոնատար անձանից:

3. **ՀՔԾ-ն քրեական գործ չի հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի** 300-**րդ հոդվածի հատկանիշներով**

ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *իշխանությունը զավթելը՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով, ինչպես նաև Սահմանադրությամբ չնախատեսված այլ եղանակով Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության կամ սահմանադրական դատարանի լիազորություններին տիրանալը՝ պատժվում են ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:*

ՀՀ նախագահի լիազորությունների տիրանալու Սահմանադրությամբ նախատեսված եղանակը, դա Սահմանադրությամբ նախատեսված ձևերի և միջոցների ամբողջությունն է:

ՀՀ Սահմանադրության 124-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Հանրապետության նախագահ կարող է ընտրվել քառասուն տարին լրացած, **վերջին վեց տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող**, վերջին վեց տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:*

Սահմանադրությամբ ՀՀ նախագահի լիազորությունների «տիրանալ» թույլատրվում է միայն ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի 2-րդ մասի պայմաններին բավարարող անձին՝ ընտրության միջոցով:

Ստացվում է, որ Արմեն Սարգսյանը տիրացել է ՀՀ նախագահի լիազորություններին, մինչդեռ վերջին վեց տարում նա միայն ՀՀ քաղաքացի չի հանդիսացել:

ՀՔԾ-ն պարտավոր էր քննարկել Արմեն Սարգսյանի վարքագծի հակասությունը այս նորմին, եթե գտել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 314[1]-րդ հոդվածը կիրառելի չէ:

Եթե վարույթն իրականացնող մարմինը գտնի է, որ նախագահի լիազորություններին տիրանալու օրինական եղանակը միայն ընտրության ձևն է, այլ ոչ թե՝ նաև Սահմանադրությամբ նախատեսված ընտրության համար անհրաժեշտ միջոցների և պայմանների առկայությունը, ապա կստացվի, որ օրինակ Ադրբեջանի նախագահը Ազգային ժողովի կողմից ՀՀ նախագահ ընտրվելու դեպքում, չի կարող ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածով պատասխանատվության կանչվել:

Իրավական նորմերի մեկնաբանության սկզբունքները սահմանված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով, որի 41-րդ հոդվածը սահմանում է՝ *Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով* ***նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝*** *ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:*

4. **ՀՔԾ-ն պարտավոր էր քրեական գործ հարուցել**.

Ինչպես ստորև կներկայացնենք, ՀՀ վճռաբեկ դատարանը նույնպես փաստել է, որ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են վարույթն իրականացնող մարմինը, քննիչը և դատախազը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և հանրային-իրավական պարտավորություններին համապատասխան:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր ԵԿԴ/0044/11/13 գործով կայացված որոշմամբ (14 կետ) հայտնել է հետևյալ իրավական դիրքորոշումը՝ *Մեջբերված քրեադատավարական դրույթների համակարգային վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցման փուլը քրեադատավարական ընթացակարգի ինքնուրույն փուլ է, որն ունի իր սկիզբն ու ավարտը, խնդիրները, սուբյեկտները և այլն: Քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը պարզում է քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի առկայության կամ բացակայության փաստը: Այս փուլում հանցագործության փաստի հաստատման և անձի մեղքի հարց չի քննարկվում:*

*Քրեական գործ հարուցելու մասին օրինական, հիմնավորված և ժամանակին կայացված որոշումն անհրաժեշտ նախապայման է հանցագործությունների արագ և ամբողջական բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: ... Վերոգրյալով պայմանավորված՝ քրեադատավարական օրենսդրությունը սահմանում է քրեական գործի հարուցման հարցը լուծելու համար անհրաժեշտ միասնական և պարտադիր կարգ, որը ենթադրում է հանցագործության մասին հաղորդման ընդունում և*

*գրանցում, դրա մեջ արձանագրված փաստական տվյալների ստուգում և պատճառաբանված որոշման կայացում: Օրենքը համապատասխան իրավասությամբ օժտված պաշտոնատար անձին պարտավորեցնում է հանցագործության մասին հաղորդումները ստուգել և լուծել անհապաղ, իսկ գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու անհրաժեշտության դեպքում հաղորդումը ստանալու պահից 10 օրվա ընթացքում:*

ԵԿԴ/0118/11/13 քրեական գործով իր կայացրած որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է՝ … *Որպեսզի հաղորդումը հիմք հանդիսանա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածով նախատեսված որոշումներից որևէ մեկը կայացնելու համար, այն պետք է բովանդակի տվյալներ կոնկրետ հանցագործության մասին:* ***Վերոգրյալը սակայն չի նշանակում, որ անձն իր հաղորդման մեջ պետք է ներկայացնի այնպիսի փաստական տվյալներ, որոնք իրենց բնույթով բավարար լինեն հանցագործության հատկանիշների առկայությունն առերևույթ հաստատված համարելու համար: Գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարար լինելն ստուգելու պարտականությունը քրեական գործի հարուցման փուլում կրում են վարույթն իրականացնող մարմինը, քննիչը և դատախազը՝ օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և հանրային-իրավական պարտավորություններին համապատասխան:*** *Այս փուլում վարույթն իրականացնող մարմինը հաղորդման նախնական ստուգման միջոցով հանցագործության հատկանիշներ մատնանշող բավարար փաստական տվյալներ ձեռք բերելու դեպքում, ինչպես նաև քրեական գործի վարույթը բացառող դատավարական արգելքների բացակայության պայմաններում պարտավոր է հարուցել քրեական գործ, հակառակ դեպքում որոշում կայացնել քրեական գործի հարուցումը մերժելու մասին:*

Հանցագործության մասին ներկայացված հաղորդումը համապատասխանում է թե՛ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին, թե՛ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված ձևաչափին:

Այն հանդիսանում է քրեական գործ հարուցելու պատշաճ առիթ, որի օրինականությունը և հիմքերի բավարար լինելը ստուգելու պարտականությունը դրված է վարույթն իրականացնող մարմնի վրա, ինչը տվյալ դեպքում կարող ենք պնդել, որ պատշաճ չի իրականացվել:

IV. **Պահանջը**

Վերոգրյալը հաշվի առնելով և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի պահանջներով,

նկատի ունենալով այն, որ Որոշումն ստացվել է 16.04.2021թ.,

Խնդրում ենք՝

- ***Վերացնել ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Գ. Մարգարյանի՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 12.04.2021թ. որոշումը (18-76Ն-21), հարուցել քրեական գործ և նախաքննություն կատարելու համար քրեական գործն ուղարկել քննիչին:***

Կից ներկայացվում է՝

1) Որոշման պատճենը.
2) Որոշման փոստային ծրարի պատճենը.
3) Բողոքին միացած փաստաբանների հայտարարությունները:

Բողոք բերողներ /ստորագրություններ/